



Եվրոպայում անվտանգության և
համագործակցության կազմակերպություն
Երևանյան գրասենյակ



«Ժողովրդավարութեան եւ
ԸՆՏՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅՆԵՐ»
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ 74

Ծրագիրը ֆինանսավորվել է
Եվրոպական միության
կողմից

Ծրագիրը
համաֆինանսավորվել է
ԵԱՀԿ Երևանյան
գրասենյակի կողմից

Իրականացնող՝
Իրավաբանների
հայկական
ասոցիացիա

Գործընկեր՝
Ինֆորմացիայի
ազատության կենտրոն

Իրականացնող՝
«Ժողովրդավարություն
և ընտրական
գործընթացներ»
միջազգային կենտրոն»
ՀԿ

«ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԸՆՏՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅՆԵՐ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

**«Մոնիթորինգի իրականացում Երևան քաղաքի 2 պոլիկլինիկաներում՝
պետության կողմից մարդասիրական ճանապարհով ստացված և անվճար
տրվող դեղորայքի, բուժ. պարագաների և բժշկական սարքերի, ինչպես նաև
պետության կողմից հակտացված գումարներով գնված ապրանքների ձեռք
բերման և հիվանդներին բաշխումների վերաբերյալ»**

Ծրագրի հաշվետվություն

«Մոնիթորինգի իրականացում Երևան քաղաքի 2 պոլիկլինիկաներում՝ պետության կողմից
մարդասիրական ճանապարհով ստացված և անվճար տրվող դեղորայքի, բուժ. պարագաների և
բժշկական սարքերի, ինչպես նաև պետության կողմից հակտացված գումարներով գնված ապրանքների
ձեռք բերման և հիվանդներին բաշխումների վերաբերյալ» ծրագիրը իրականացրել է
«Ժողովրդավարություն և ընտրական գործընթացներ» միջազգային կենտրոն» հասարակական
կազմակերպությունը՝ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության և
«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության հետ
համագործակցությամբ գործարկվող «Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագրով
տրամադրված փոքր ենթադրամաշնորհների շրջանակներում: Ծրագրի բյուջեն կազմել է 1,135,000 ՀՀ
դրամ, որից 985,000 ՀՀ դրամը տրամադրվել է «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական
կազմակերպության կողմից: Ծրագրի տևողությունն է՝ 2016 թվականի ապրիլի 1-ից մինչև մայիսի 31-ը:

«Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական
միության կողմից և համաֆինանսավորվում է ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի կողմից:

ԵՐԵՎԱՆ 2016

Ծրագրի նպատակը

«Մոնիթորինգի իրականացում Երևան քաղաքի 2 պոլիկլինիկաներում՝ պետության կողմից մարդասիրական ճանապարհով ստացված և անվճար տրվող դեղորայքի, բուժ. պարագաների և բժշկական սարքերի, ինչպես նաև պետության կողմից հակտացված գումարներով գնված ապրանքների ձեռք բերման և հիվանդներին բաշխումների վերաբերյալ» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) նպատակն էր մոնիթորինգի միջոցով ուսումնասիրել պոլիկլինիկաներում հաշվառված շաքարային դիաբետով հիվանդների և նրանց անվճար հատկացվող դեղորայքի շարժի ոլորտը, որի արդյունքում կպարզվեր դեղորայքի բաշխման գործընթացում կոռուպցիոն ռիսկերի առկայությունը: Մոնիթորինգի արդյունքների ուսումնասիրության ընթացքում պետք է համեմատականներ անցկացվեին փաստացի հաշվառված հիվանդների և նրանց հիվանդության հաշվառման քարտերի համապատասխանության, հիվանդների ստացված դեղորայքի /տարբեր տեսակի ինսուլիններ և դեղահաբեր/ բաշխման օրինականությունը և դրանց համապատասխանությունը հաշվառման քարտերում գրանցված և դեղատոմսերով դուրս գրված դեղորայքի անվանումներին և քանակներին: Ուսումնասիրության ընթացքում շաքարային դիաբետով հիվանդներից՝ շահառուներից ընտրանքային կարգով ընտրվել են ֆոկուս խմբեր, որոնց շրջանում իրականացվել են հարցումներ՝ իրենց կողմից ստորագրված և փաստացի ստացված դեղորայքի անվանումների ու դրանց քանակների համապատասխանությունը համապատասխան հիվանդության հաշվառման քարտերում ու դեղատոմսերում նշված դեղորայքի անվանումների ու դրանց քանակների միջև: Այդ հարցումների ընթացքում դեղորայքի անվանումների և քանակների անհամապատասխանություններ չեն արձանագրվել: Ընտրանքային կարգով ուսումնասիրվել են նաև առկա մնացորդային դեղորայքի պիտանելության ժամկետները, որոնք բոլորը պիտանի էին հետագա օգտագործման համար:

Ծրագրի շրջանակներում Երևան քաղաքի թիվ 1-ին և թիվ 16-րդ պոլիկլինիկաներում իրականացված 2014-2015թթ. շաքարային դիաբետով հիվանդների և նրանց անվճար հատկացվող դեղորայքի շարժի մոնիթորինգի արդյունքների վերաբերյալ զեկույցին կարող էք ծանոթանալ սույն հաշվետվության կից ներկայացված Հավելված 1-ում:

Ընդհանուր նկարագրություն

2016թ. ապրիլի 1-ին «Ժողովրդավարություն և ընտրական գործընթացներ» միջազգային կենտրոն հասարակական կազմակերպությունը /այսուհետ՝ ՀԿ/ դիմել էր Երևանի քաղաքապետարան, որպեսզի թույլտվություն ստանար քաղաքապետարանի ենթակայության տակ գտնվող երկու պոլիկլինիկաներում իրականացնելու պետության կողմից մարդասիրական ճանապարհով ստացված և անվճար տրվող դեղորայքի, ինչպես նաև պետության կողմից հատկացված գումարներով գնված դեղորայքի ձեռք բերման և հիվանդներին բաշխումների վերաբերյալ երկամսյա ուսումնասիրություններ իրականացնելու համար:

Երևանի քաղաքապետարանի թույլտվությունից հետո, սկսվեցին ուսումնասիրությունների իրականացումը Երևան քաղաքի թիվ 1 և 16 պոլիկլինիկաներում: Ուսումնասիրությունների համար սահմանված ժամկետը երկու ամիս էր:

Թիվ 16 պոլիկլինիկայում ուսումնասիրվել է 2014-2015թթ. ժամանակահատվածում հաշվառված շաքարային դիաբետով հիվանդների և այդ ընթացքում նրանց հատկացված դեղորայքի շարժը: Ուսումնասիրվել են 2014 և 2015թթ. շաքարային դիաբետով հիվանդների հիվանդության քարտերը, հիվանդների ամսական շարժերը, 2014 և 2015թթ. տարեսկիզբների դրությամբ առկա շաքարային դիաբետի բուժման համար անհրաժեշտ դեղորայքի մնացորդները, նույն թվականների ընթացքում առողջապահության նախարարությունից (ԱՆ), պետական առողջապահության գործակալությունից (ՊԱԳ) և մարդասիրական օգնության ճանապարհով ստացված դեղորայքի ամսական մուքերը, ամսական շարժերը, ամսական մնացորդները: Իսկ թիվ 1 պոլիկլինիկայում նույն ուսումնասիրություններն իրականացվել են 2015թ. կտրվածքով, քանզի տեղեկատվությունը շատ ծավալուն էր և ուսումնասիրությունների համար սահմանված ժամանակը թույլ չէր տալիս ավելին անել:

Վերը նշված երկու պոլիկլինիկաներում օրենսդրությամբ սահմանված կարգով անվճար դեղորայքը հիվանդներին հատկացվում է ըստ հիվանդների խմբերի և հիվանդության տեսակների: Թիվ 1 պոլիկլինիկան 31.12.2015թ. դրությամբ սպասարկել է թվով 15,653 հիվանդների, իսկ թիվ 16 պոլիկլինիկան 01.01.2014թ. դրությամբ 18 տարեկանից բարձր՝ թվով 14,575 ազգաբնակչության, և մանուկների՝ մինչև 18 տարեկան՝ թվով 16,721 ազգաբնակչության, ընդհանուր թիվը՝ 31,296 հոգի և 01.01.2015թ. դրությամբ սպասարկել է 18 տարեկանից բարձր՝ թվով 13,628 ազգաբնակչության, և մանուկների՝ մինչև 18 տարեկան՝ թվով 16,242 ազգաբնակչության՝ ընդհանուր թիվը 29,870 հոգի: Պոլիկլինիկաների կողմից հատկացվող դեղորայքի տեսականին բավականին մեծաքանակ է, ուստի որոշում կայացվեց ուսումնասիրությունն իրականացնել շաքարային դիաբետով հիվանդների և նրանց հատկացվող դեղորայքի մասով, քանզի նման ախտորոշմամբ հիվանդները ամենախոցելի են և նրանց

բուժման ընթացքը պետության կողմից իրականացվում է ամենօրյա խիստ հսկողության ներքո, քանի որ այդ հիվանդության յուրահատկությունն է այդպիսին: Շաքարային դիաբետն այնպիսի հիվանդություն է, որի բուժման ընթացքում դեղորայքի նշանակման ստանդարտներ չեն գործում: Ավելի պարզ ասած, նույն խմբին պատկանող ցանկացած հիվանդի համար դեղորայքային նշանակումը ենթադրում է դեղորայքի տարբեր խմբաքանակ՝ տարբեր չափաբաժիններով: Կախված դեղորայքի ազդեցությունից, նույն հիվանդի համար տարբեր ժամանակահատվածում կարող են նշանակվել տարբեր չափաբաժիններ: Այդ հիվանդության դեպքում, դեղորայքի նշանակման գործընթացը հիմնականում ենթադրում է դեղորայքի փոփոխական նշանակումներ և դեղորայքի տեսակների, և դեղորայքի չափաբաժինների տեսանկյունից: Այդ իսկ իմաստով, տվյալ պահին ունենալով շաքարային դիաբետով հիվանդների ցանկը՝ ըստ խմբերի, անհնար է նախապես մեծ ճշգրտությամբ կանխատեսել նրանց բուժման համար անհրաժեշտ դեղորայքի տեսականին և պահանջվող քանակները: Այդ ամենը որոշվում է որոշակի մոտավորությամբ՝ բուժման ընթացքում անընդհատ նշանակման ճշգրտումներ կատարելով: Հետազոտության ընթացքում ուսումնասիրվեցին պոլիկլինիկաների կողմից ստացված դեղորայքի անվանումները և քանակները, հիվանդների հաշվառման քարտերը, ներկայացված դեղատոմսերը, ամսական կտրվածքով հատկացված դեղորայքի անվանումները և քանակները, ինչպես նաև դրանց համապատասխանությունը հաշվառման քարտերում և հիվանդների կողմից ստորագրված դեղատոմսերում նշված անվանումներին և քանակներին: Այդ ուսումնասիրության արդյունքում ի հայտ չեկան դեղորայքի բաշխման հետ կապված կոռուպցիոն ռիսկեր, իսկ ֆոկուս խմբերի հարցումների ժամանակ դժգոհություններ չհայտնվեց սպասարկման որակի հետ կապված:

Մեթոդաբանություն

Ծրագրի իրականացման և հետազոտությունների կատարման համար օգտագործվել են տարբեր մեթոդաբանական գործիքներ, որոնց միջոցով հավաքված տեղեկատվության հավաքագրմամբ հնարավոր եղավ ապահովել իրավիճակի համակողմանի գնահատումը:

Փաստաթղթերի վերլուծություն

Ծրագրի իրականացման և հետազոտությունների կատարման ընթացքում ուսումնասիրվել են այն բոլոր փաստաթղթերը, որոնցում առկա են շաքարային դիաբետով հիվանդների և նրանց հատկացվող դեղորայքի վերաբերյալ տեղեկություններ, ինչպես նաև դեղորայքի բաշխման վերաբերյալ չափորոշիչներ սահմանող փաստաթղթեր:

Ուսումնասիրվել են.

1. Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի նոյեմբերի 23-ի N 1717-Ն որոշումը «Անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղեր ձեռք բերելու իրավունք ունեցող բնակչության սոցիալական խմբերի եվ հիվանդությունների ցանկերը հաստատելու մասին»:
2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2005 թվականի հունվարի 27-ի N 74-Ն հրամանը «Անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղերի հատկացման կարգը հաստատելու մասին»:
3. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2010 թվականի սեպտեմբերի 9-ի N 17-Ն հրամանը «Դեղերի փոխադրման, պահեստավորման եվ պահպանման կարգը սահմանելու մասին»:

Հարցումներ

Որպես ֆոկուս խմբեր, թիվ 1 և 16 պոլիկլինիկաներում հաշվառված շաքարային դիաբետով հիվանդների շրջանակից պատահական ընտրությամբ ընտրվել են /ամեն պոլիկլինիկայում 30 հիվանդ/ և հարցումներ են կատարվել հաշվառման քարտերում և դեղատոմսերում նշված դեղորայքի անվանումների և քանակների ու նրանց կողմից ստորագրված և փաստացի ստացված անվանումների և քանակների հետ, ինչպես նաև իրենց սպասարկման ծառայությունների որակի հետ կապված:

Արդյունքների ամփոփում

«Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագրի շրջանակներում, «Մոնիթորինգի իրականացում Երևան քաղաքի 2 պոլիկլինիկաներում՝ պետության կողմից մարդասիրական ճանապարհով ստացված և անվճար տրվող դեղորայքի, /այսուհետ՝ բժշկական ապրանքներ/, ինչպես նաև պետության կողմից հատկացված գումարներով գնված բժշկական ապրանքների ձեռք բերման և հիվանդներին բաշխումների վերաբերյալ» ենթադրամաշնորհային ծրագրի համաձայն, 2016թ. ապրիլ-մայիս ամիսներին «Ժողովրդավարություն և ընտրական գործընթացներ» միջազգային կենտրոն ՆԿ-ն Երևան քաղաքի թիվ 1 և թիվ 16 պոլիկլինիկաներում իրականացրեց ուսումնասիրություն՝ մոնիթորինգ, 2014-2015թթ. ընթացքում շաքարային դիաբետով հիվանդների և նրանց անվճար հատկացված դեղորայքի բաշխումների՝ շարժի օրինականության և առկա կոռուպցիոն ռիսկերի վերաբերյալ: Թիվ 1 պոլիկլինիկայում ուսումնասիրվեց 2015թվականը, իսկ թիվ 16 պոլիկլինիկայում՝ 2014-2015թթ. ժամանակահատվածը: Իրականացնելով հիվանդության քարտերի, դեղատոմսերի, 2014, 2015 և 2016 թվականների տարեսկիզբների մնացորդային, դեղորայքի մուտքագրված և ելքագրված փաստաթղթերն ու համապատասխան վերլուծություններ, համեմատություններ դրանց վերաբերյալ, պարզվեց, որ բաշխված դեղորայքը անվանումներով և քանակներով համապատասխանում է այդ ժամանակահատվածում առկա մնացորդային, գումարած մուտքային, հանած տարեվերջյան մնացորդներ դեղորայքի քանակներին: Այլ խոսքով, դեղորայքի շարժի մեջ անհամապատասխանություններ չհայտնաբերվեցին, որը խոսում է իրականացված գործընթացում կոռուպցիոն ռիսկերի բացակայության մասին, որը բավականին ուրախալի փաստ է: Ավելացնենք նաև, որ ընտրանքային կարգով ընտրված շահառուների՝ հիվանդների ֆոկուս խմբերի՝ յուրաքանչյուր պոլիկլինիկայից 30-ական հիվանդի հետ իրականացվել են հարցումներ, այդ ժամանակահատվածում իրենց կողմից ստորագրված փաստաթղթերում՝ նշված դեղորայքի անվանումների և քանակների, ինչպես նաև իրենց կողմից փաստացի ստացված դեղորայքի անվանումների ու քանակների համապատասխանության վերաբերյալ, որի ընթացքում հիվանդների պատասխաններից պարզ դարձավ, որ անվանական և քանակական անհամապատասխանություններ չեն եղել: Բուժանձնակազմի կողմից սպասարկման ծառայությունների որակի վերաբերյալ հարցումները նույն ֆոկուս խմբերի հետ արձանագրեց, որ այդ ծառայությունները մատուցվել են պատշաճ որակով: Շահառուների կողմից եղել են որոշակի դժգոհություններ, կապված հերթերի և մատուցվող դեղորայքի որակի վերաբերյալ: Նրանք ներկայացնում էին, որ տեղյակ են, որ արդեն շրջանառության մեջ են շատ ավելի որակյալ ինսուլիններ, որ պարագայում բուժման էֆեկտը շատ ավելի մեծ է և կուզենային, որ իրենց մատուցվող դեղորայքի անվանացանկը նույնպես փոփոխվի և իրենք ևս ստանան ավելի ժամանակակից օգտագործման ինսուլիններ, որոնց արդյունքում իրենց բուժման ընթացքը ավելի էֆեկտիվ լինի:

Առաջարկություններ

Մոնիթորինգի արդյունքում, ծրագրի թիմի կողմից կարող ենք անել հետևյալ իրատեսական առաջարկությունները.

1. Ուսումնասիրությունների ողջ ընթացքում երկու պոլիկլինիկաներում էլ հերթեր էին գոյանում և դա այն դեպքում, երբ շաքարային դիաբետով հիվանդների համար բացարձակ հակացուցված է նյարդային սպասումները: Անհրաժեշտ է, որպեսզի նախապես հեռախոսային զանգերով ժամ նշանակել և գրաֆիկով այցելել պոլիկլինիկաներ, որպեսզի հերթեր չգոյանան, որն էլ պետք է ապահովեն պոլիկլինիկաները:
2. Տարբեր հիվանդների և մասնագետների հետ զրույցից պարզ է դառնում, որ տրամադրվող ինսուլինների որակը բավականին ցածր է և պետք է պետությունն ամեն ինչ անի, որպեսզի պոլիկլինիկաներին ապահովի ավելի բարձր որակի ինսուլիններով:
3. Պետք է ուսումնասիրվի պոլիկլինիկաների կողմից կազմակերպվող դեղորայքի գնման գործընթացները:
4. Շաքարային դիաբետով հիվանդներին անպայմանորեն պետք է ապահովել չափիչ սարքերով, որպեսզի նրանք կարողանան տանը չափումների միջոցով հսկողության տակ պահել շաքարի պարունակության չափը արյան մեջ:

*«Ժողովրդավարություն և ընտրական գործընթացներ» միջազգային կենտրոն
հասարակական կազմակերպության նախագահ,
Ծրագրի ղեկավար՝ Անանիա Մաղաքյան*

«02» Օգոստոս, 2016թ.